ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Տեքստի տեսակները՝ որպես բազմաբնույթ մտածողության կիրառում տարրական դասարաններում:

Առարկա- Մայրենի

Հեղինակ- Անուշիկ Եղիշի Բալաչյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Քարաշենի միջնակարգ դպրոց <<ՊՈԱԿ>>

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……3
2. Հ. ԳԱՐԴՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ…….5
3. ՏԵՔՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……7
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..17
5. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով մի շարք մանկավարժահոգեբանական հետազոտությունների և բազմաթիվ ուսումնասիրությունների վրա՝ կարող ենք փաստել, որ խոսքային հաղորդակցման լիարժեք ուղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակների զարգացմանը:

Տարրական դպրոցում սովորող աշակերտը պետք է կարողանա իր մայրենի լեզվով հաղորդակցվել մեծահասակների և իր հասակակիցների հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստերի իմաստը, գրավոր շարադրել պարզ տեքստեր, կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող: Պետք է կարողանա գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան և հասարակական կյանքի արժեքները, իմանա իր իրավունքներն ու պարտականությունները: Այս ամենի համար տարրական դպրոցի ուսուցիչը պետք է իրականացնի տարրական դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկը՝ սովորեցնի աշակերտներին հաղորդակցվել, զարգացնել նրանց խոսքային հմտությունները:

Տարրական դասարաններում <<Խոսք և հաղորդակցություն>> դասաժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների (կարդալ, գրել, լսել, պատմել, խոսել) ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակամետ աշխատանքն է: Այն ունի ուրույն խնդիրներ և նպատակներ: Դրա կիրառումը միտված է կրտսեր դպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացմանը, միջավայրում հաղորդակցման, իր հույզերի մասին տարբեր արհատայտման ձևեր օգտագործելու կարողությունների զարգացմանը:

<<Խոսք և հաղորդակցության>> ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով:

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը: Տեքստի տեսակներին անհրաժեշտ է անդրադառնալ խոսքի բանավոր կամ գրավոր, հաղորդակցական խնդրի տեսանկյունից: Տեքստը լեզվի ուսուցման, խոսքի

զարգացման համար ամենակարևոր հասկացություններից մեկն է, քանի որ ցանկացած լեզվի ուսուցման գլխավոր նպատակը, ի վերջո, բանավոր և գրավոր ազատ հաղորդակցվելն է, ինչը ենթադրվում է սեփական մտքերը կապակցված, տրամաբանված արտահայտելու, այսինքն՝ բանավոր և գրավոր տեքստ ստեղծելու կարողություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել, վերլուծել բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիան և բացահայտել վերջինիս կիրառման ձևերը տարրական դասարաններում տարբեր տեսակի տեքստերի միջոցով:

Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք աշխատանքի կատարման հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել Հ. Գարդների Բազմաբնույթ մտածողության տեսությունը,
- բացահայտել մեր կողմից դասավանդվող դասարանում աշակերտների մտածողության անհատական առանձնահատկությունները,
- ներկայացնել աշակերտների՝ տեքստի հետ աշխատելու արդյունավետ մեթոդներ,
- բացահայտել տարբեր տեսակի տեքստերի կիրառման նպատակահարմար եղանակները՝ որպես սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացման միջոց:

Աշխատանքի կիրառական նշանակությունը պայմանավորված է աշխատանքում առկա մոտեցումների ուսուցիչների կողմից դասագործընթացում կիրառելու հնարավորությամբ:

Հետազոտոտական աշխատանքի արդյունքներն ամփոփված են եզրակացություններում:

Հ. ԳԱՐԴՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բազմաբնույթ մտածողության տեսությունը Հովարդ Գարդների կողմից 1983 թվականին առաջարկված տեսություն է՝ ինտելեկտի մոդել, որն ինտելեկտը դիտում էր տարաբնույթ կոնկրետ (առաջին հերթին զգայական) պայմաններում:

Բազմաբնույթ մտածողության տեսությունն ամբողջությամբ ներկայացվել է Հովարդ Գարդների «Գիտակցության կառուցվածքը» (1983) գրքում: Հովարդ Գարդները գտնում էր, որ յուրաքանչյուր մարդու հատուկ է մտածողության, ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, որոնք հազվադեպ են գործում իրարից անկախ: Դրանք օգտագործվում են միաժամանակ և մարդու կարողությունների զարգացման կամ խնդիրների լուծման ընթացքում ունեն միմյանց լրացնելու հակում: Գարդներն առանձնացնում էր մտածողության 7 տիպեր.

- *Լեզվական մտածողությունը* խոսակցական և գրավոր լեզվի զգացողությունն է, լեզուն սովորելու կարողությունը և որոշ նպատակներին հասնելու համար լեզուն կիրառելու հնարավորությունը: Այն ներառում է լեզուն՝ որպես հռետորական կամ բանաստեղծական արտահայտման միջոց կիրառելու կարողությունը, ինչպես նաև որպես տեղեկատվությունը մտապահելու միջոց:
- *Տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունը* կապված է տրամաբանության, վերացարկման, դատողության, քննադատական մտածողության հետ: Այն նաև կապված է պատճառա-հետևանքային կապերը հասկանալու ունակությունների հետ:
- *Տարածական մտածողությունը* ներառում է ընդարձակ և ավելի սահմանափակ տարածությունների ճանաչման և նրանց օգտագործման ներուժը:
- *Երաժշտական մտածողությունը* ներառում է գործիքների վրա նվագելու, ստեղծագործելու և երաժշտության գնահատման կարողությունները: Այն հնարավորություն է տալիս ճանաչել ու ստեղծել երաժշտական ձայներ, տոներ և ռիթմեր:
- *Մարմնաշարժողական մտածողության* հիմնական տարրերն իր մարմնի շարժումները վերահսկելու և համակարգելու կարողություններն են:

Մտածողության այս տիպը հատկապես զարգացած է մարզիկների, պարողներ, երաժիշտների, դերասանների, ոստիկանության աշխատողների մոտ։

- *Միջանձնային մտածողությունը* վերաբերում է այլ մարդկանց մղումները, դրդապատճառներն ու ցանկությունները հասկանալու հնարավորությանը։ Այն մարդկանց հնարավորություն է տալիս արդյունավետ համագործակցել միմյանց հետ։ Մանկավարժները, առևտրի բնագավառի աշխատողները, հոգևոր և քաղաքական առաջնորդներն ու խորհրդատուները լավ զարգացած միջանձնային մտածողության կարիք ունեն։
- *Ներանձնային մտածողությունը* տալիս է ինքն իրեն, իր զգացմունքները, մտահոգություններն ու մղումները հասկանալու հնարավորություն։ Սա սեփական արդյունավետ աշխատանքը հասկանալու ունակությունն է, որի մասին տվյալները, տեղեկություններն օգտագործվում են մեր կյանքը կարգավորելու համար։

Հ. Գարդների և նրա գործընկերների համապատասխան հետազոտությունների արդյունքում հետագայում ավելացվեցին մտածողության ևս 3 տիպեր.

- *Բնագիտական մտածողությունը* Գարդների կողմից առաջարկվել է 1995 թվականին։ Հնարավորություն է տալիս բնության տարրերը տեսնել փոխկապակցության մեջ։ Կիրառելով մտածողության այս ձևը՝ մարդը կարող է պատկերացում կազմել արտաքին (բնական, կենդանական, տիեզերական) աշխարհի մասին։ Տեսնելով և լսելով պատմություններ կենդանիների կամ երևույթների մասին՝ նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այնպիսի առարկաների նկատմամբ, ինչպիսիք են բուսաբանությունը, կենսաբանությունը, անատոմիան, աստղաբանությունը, օդերևութաբանությունը։
- *Հոգևոր մտածողությունն* արտահայտում է հոգևոր ոլորտը։ Գարդները գտնում է, որ հոգևոր մտածողության ձևակերպման հետ կապված որոշ բարդություններ կան։ Ըստ նրա՝ լավ կլինի մի կողմ դնել «հոգևոր» բառը՝ իր իմաստային բարդությամբ, փոխարենը խոսել այնպիսի մտածողության մասին, որն ուսումնասիրում է իրականությունն իր բազմաբնույթ դրսևորումներով։

- *Իրական (էքզիստենցիալ) մտածողությունը* Գարդները համարում է մտածողության բարձրագույն դրսևորում: Նա ենթադրում էր, որ էքսիստենցիալ մտածողությունը կարող է օգտակար կառուցվածք լինել, և որպես մտածողության առանձին առանձին տիպ առաջարկեց իր գրքում 1999 թվականին:

ՏԵՔՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեքստը ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է:

Որպես կանոն՝ տեքստն ունենում է թեմա կամ հիմնական ասելիք, իմաստ, որը հաճախ, հատկապես գրավոր տեքստում արտացոլվում է վերնագրում:

Գեղարվեստական տեքստից բացի անպայման անհրաժեշտ են առաջադրանքներ երեխաների առօրյային առնչվող իրադրությունների, իրավիճակների մասին՝ որոնք հնարավորություն կստեղծեն, որ նրանք կարողանան նկարագրել, պատմել, դատողություններ անել իրենց որոշակի հաղորդակցական խնդիրների լուծման տեսանկյունից: Ուսուցիչը պետք է երեխաներին իրենց կյանքից ու առօրյայից բանավոր կամ գրավոր ամենատարբեր պատմություններ պատմելու, նկարագրելու, դատողություններ անելու առաջադրանքներ տա՝ հետևելով, որ պահպանվեն տեքստի այս կամ այն տեսակի գլխավոր առանձնահատկությունները:

Տեքստի և նրա հիմնական հատկանիշների իմացությունն օգնում է աշակերտներին արդյունավետ ձևակերպելու սեփական մտքերն ու խոսքը: Տարրական դասարաններում ենթադրում է մի քանի խնդրի լուծում:

Կրտսեր դպրոցականը պետք է կարողանա՝

- Տարբերակել տեքստը նախադասությունների պարզ գումարից,
- Իմանալ և տարբերակել տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները (թեմատիկ միասնություն, իմաստային ամբողջականություն, կապակցվածություն, վերնագիր, բանալի բառեր, պարբերություն, տեքստի հիմնական կառուցվածքային-իմաստային մասերը (սկիզբ, ընթացք, ավարտ):

Այս խնդիրների լուծման նպատակով ներկայացնում են մի շարք առաջադրանքներ:

Խնդրահարույց հարց- Հարցերի հիմնական նպատակը ցանկալի տեղեկատվության ձեռքբերումն է: Անշուշտ գիտենք, որ երբեմն որոշակի հարցեր տալիս ենք բարեկրթությունիրց ելնելով (օրինակ՝ <<Ինչպե՞ս են գործերդ>>, <<Ինչպե՞ս ես հանգստացել>> և այլն): Եթե զրուցակցի հետ շփումը հետաքրքիր և հաճելի է, կամ դուր է գալիս զրույցի թեման, ապա հարցերն օգնում են շարունակել և զարգացնել զրույցը: Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, ինչո՞ւ…

Ներկայացված հարցերը աշակերտներից պահանջում են մտապահել գաղափարները, վերլուծել տեղեկությունը, վերակառուցել կամ այլ կերպ արտահայտել այն: Հարցադրումների նման բազմազանությունը նպաստում է տեքստի, տեղեկատվության լիարժեք ձեռքբերմանը:

<<Երբ հարցերն ու մտածողությունը մնում են փաստային մակարդակի վրա, աշակերտների իմացությունն նմանվում է փոշոտ դարակին մնացած հանրագիտարանում կուտակված տեղեկատվության>>:

Հարցերը նաև տարբեր մակարդակի մտածողության խթանման հրաշալի միջոց են: Ահա թե ինչու այդքան կարևոր է աշակերտներին ոչ միայն հարցերին պատասխանել, այլ նաև հարցեր տալ սովորեցնել: Երեխաներին հարցեր ձևակերպել սովորեցնելու համար առաջարկում ենք մի հարցարան:

Տրված օրինակի նմանությամբ երեխաներից յուրաքանչյուրը մի իր, առարկա, երևույթ է պահում մտքում և նկարագրել այն, հետևելով հարցերին: Անհրաժեշտ է որոշակի ժամանակ տրամադրել երեխաների հարցարանները դասարանում ներկայացնելուն և քննարկելուն:

Հիպոթեզ- Ինչը ակնհայտ չէ օբյեկտում, հետազոտության նպատակը ակնհայտ դարձնելն է: Աղյուսակով ներկայացնել տեքստի տեսակները՝ իրենց բնորոշ հարցադրումներով: Դրանք կօգնեն երեխաներին հասկանալ յուրաքանչյուր տեսակի տեքստ ստեղծելու տրամաբանությունը:

Այս առաջադրանքում արդեն երեխաները, շարունակելով առաջարկված տեքստերը, դրանք պիտի դարձնեն **պատմողական, նկարագրական** և **դատողական:**

Այդ հարցում նրանց կօգնեն առաջադրանքում ընդգծված հարցադրումները:

Երբ երեխաները տանը կամ դասարանում կկատարեն առաջադրանքը, առաջարկել նրանցից մի քանիսին կարդալ իրենց պատմությունները: Քննարկել, թե արդյո՞ք իրենց գրած տեքստերը դարձել են պատմություն, նկարագրություն կամ դատողություն:



Օրինակ՝ **Գարունն այգիներում**

Այս տարի գարունը շուտ եկավ, և հողագործական աշխատանքները վաղ սկսվեցին: Մարդիկ մաքրում էին այգիներն ու դաշտերը, փխրեցնում հողը, խնամում ծառերը:

Պատմություն

Ծիրանենիները ծաղկել են:

Հայաստանում սովորաբար ծիրանենիներն առաջինն են ծաղկում: Ծիրանի ծառի վրա սկզբում ծաղիկներ են հայտնվում, նոր հետո՝ տերևները: Եվ մուգ շագանակագույն ճյուղերի վրա սպիտակ ծաղիկները շատ գեղեցիկ են լինում:

Նկարագրություն

Գիժ մարտը

Մարտ ամսին երբեմն ձմռան նման ցուրտ է լինում: Իզուր չէ, որ մարդիկ նրան <<Գիժ մարտ>> են կոչում: Այսօր կեսգիշերին եռուզեռ էր Արարատյան դաշտավայրի այգիներում: Գյուղացիները ծաղկած ծիրանենիների այգու մոտ չոր ճյուղերից, տերևներից և լաթի կտորներից փոքրիկ կույտեր էին հավաքել ու վառել: Բայց խարույկները վառվելու փոխարեն ծխում էին: Ի՞նչ էր պատահել: Մարդիկ ծաղկած ծառերը ծխով էին պատել, որովհետև կարող են ծիրանենիները ցրտահարվել:

Դատողություն

Նորույթ-Ի՞նչ նոր բան է հայտնաբերվել հետազոտության ընթացքում: Երբ մի քանի նախադասություն իմաստով կապված են իրար, այսինքն՝ նույն բանի մասնին են, դառնում են **տեքստ:**

Յուրաքանչյուր տեքստ սովորաբար ինչ-որ մեկի մասին է լինում: Դա էլ հենց տեքստի թեման է: Շատ հաճախ թեման արտահայտվում է տեքստի վերնագրում:

Տեքստը նաև ունենում է գլխավոր միտք, ասելիք: Հասկանալ տեսքստը նշանակում է հասկանալ նաև գլխավոր, հիմանկան միտքը:

Հիմնական միտքն արտահայտվում է ամբողջ տեքստում: Բայց հաճախ դրա մասին կարող է հուշել տեքստի մի նախադասությունը:

Հաճախ այդ հուշում-նախադասությունը լինում է տեքստի սկզբում կամ վերչջում:

Յուրաքանչյուր տեքստում լինում են բանալի բառեր կամ արտահայտություններ, որոնք հուշում են գլխավոր թեման, բնորոշում են հերոսներին, դեպքերը:

Սրանք տեքստի առանձնահատկություններն են: Տեքստի առանձնահատկությունների օգնությամբ կարող են պատկերացում կազմել նույնիսկ անծանոթ տեքստի մասին:

Տեքստ

Ամպի երեխաները

Ամպը չորս երեխա ունի: Չորսին էլ լավ եք ճանաչում: Ովքե՞ր են նրանք:

Մեծը՝-ով ջուր է տալիս չորացած հողին: (Անձրև)

Նրա քույրը՝-ով ճերմակ աղջիկ է, երբ փռում է իր փափուկ թևերը: (Ձյուն)

Եղբայրը՝-ով գալիս է փշրում է ծառ ու ճյուղ: (Կարկուտ)

Բոլորից փոքրը՝- ով պստիկ, քնքուշ աղջիկ է, մարգարիտներ է շարում ծաղիկների ու խոտերի թերթերին: (Ցող)

Ահա ամպի չորս երեխաները: Անձրևը, ձյունը, կարկուտը, ցողը:

Շատ կարևոր է երեխաներին սովորեցնել ճանաչել ու տարբերակել տեքստի իմաստային ազդանշանները:

Գործնականում ի՞նչ ազդեցություն կունենա հետազոտության աշխատանքի արդյունքները: Այստեղ առաջարկում ենք խաղային բնույթի մի առաջադրանք բանալի բառերի մասին: Գրադարանավարին օգնելու համար Գագիկն ու Վազգենը երազում էին դառնալ խուզարկու: Նրանք աղբամանից հանեցին թղթի կտորներ և փորձեցին վերականգնել տեքստի բովանդակությունը: Ընթերցողական քարտերով կստուգեն, թե ով է վերջին անգամ վերցրել այն: Վերջին ընթերցողն էլ պատռել է

գիրքը: Բայց ցավոք սրտի, էջի բոլոր կտորները չէ, որ պահպանվել էին: Միայն առանձին բառեր ու բառակապակցություններ էր հնարավոր կարդալ: Կարո՞ղ եք օգնել տղաներին գտնել, թե որ գրքից են պատռված էջերը: Այդ բառերը կարող են գաղտնիքը բացող բանալի դառնալ:

<u>Գնամ քարվան կտրեմ,բախտ ունես, որ մին զարկի, ճանճերը ջարդվում են, վագրին նստած, ալարկոտ ու վախկոտ:</u>

<u>Գրական անկարկ-Ի՞նչ է արդեն հայտնի խնդրի շուրջ:</u>

Տեքստը (լատիներեն բառերի կապ, հյուսվածք), գրական երկի բնագիրը այն ձևով, ինչպես որ ստեղծվել է հեղինակի կողմից: Գրական բնագրերի գիտական ճշտման և հրատարակության խնդրով զբաղվում է գրականագիտության բաժիններից մեկը՝ տեքստաբանությունը: Տեքստ են կոչվում նաև այն խոսքերը, որոնք գրվում են երաժշտական ստեղծագործության (օպերա, ռոմանս, երգ) հիմքում:

Տեքստի ծավալները կարող են տարբեր լինել՝ մեկ նախադասությունից մինչև ամբողջական պարբերություն ու մի քանի պարբերություններ: Տեքստում նախադասություններն ու պարբերություններն անպայմանորեն ունենում են տրամաբանական հաջորդականություն և դասավորվածություն, որ չխաթարվի տեքստի իմաստը, և այն սխալ չընկալվի: Այն բոլոր տեքստերը, որոնք իրենց հիմքում պարունակում են տեղեկություն, կոչվում են **տեղեկատվական տեքստեր.** այդպիսիք են՝ լուրը, նամակը, հայտարարությունը, ազդագիրը, հեռագիրը, գովազդը, ծանուցագիրը:

Այս տեքստի նպատակը հասարակության ուշադրությունը որոշակի հարցերի վրա բևեռելը կամ կենտրոնացնելն է. այս տեքստերը հայտնում են, տեղեկացնում, ծանուցում, գովազդում: տեղեկատվական տեքստում բովանդակությունը լինում է բավարար չափով ամբողջական և ավարտուն, որպեսզի լրացուցիչ պարզաբանման կարիք չունենա:

Լրատվությունը նորություն է հաղորդում ինչ-որ բանի մասին, որը կարող է հետաքրքրել շատերին: Բայց նորություններն իրենց կարևորությամբ կարող են տարբեր լինել: Մեկը կհետաքրքրի աշխարհի բոլոր մարդկանց, իսկ մյուսը մեր քաղաքի բնակիչներին, կամ միայն քեզ ու քո համադասարանցիներին:

Ներկայացված լուրերի շարքը

_Հիդրոմետ ծառայությունից հայտնում են, որ Նոր տարվա գիշերը առատ ձյուն է գալու:

_Քաղաքի փողոցներում հայտնվել է մանկական սրճարան-ավտոբուս: Մի թաղամասից մյուսը երթևեկելու ընթացքում ավտոբուսում ձեզ կարող են հյուրասիրել պաղպաղակ, թխվածքներ և հյութ:

Ոչ խոսքային հաղորդակման կարևորությունը բազմաբնույթ մտածողության ձևավորման գործում ցույց տալու համար ներկայացնում ենք մի քանի առաջադրանք:

Ուսուցիչը կարող է նախապես հետազոտական աշխատանք հանձնարարել երեխաներին. Դպրոց գալու կամ տուն գնալու ճանապարհին ուսումնասիրել իրենց թաղամասը, համայնքը և պարզել, թե ինչ հաստատություններ կան այնտեղ: Ուշադիր դիտում են փողոցը, թաղամասը, համայնքը. ի՞նչ կա այնտեղ տներից բացի. գուցե՝ դպրոց, մանկապարտեզ, խանութ, պոլիկլինիկա, դեղատուն, զբոսայգի, վերանորոգման արհեստանոց:

Ձեր կարծիքով ի՞նչ է պակասում ձեր համայնքին. ինչի՞ կարիք ունեք: Դասարանում ներկայացնում են հետազոտության արդյունքները, ծանոթանում ընկերների աշխատանքին:

Մտածեք, թե ձեր կարծիքով ուրիշ ի՞նչ է անհրաժեշտ ձեր համայնքին, թաղամասին, փողոցին: Դասարանում երեխաները ներկայացնում են հետազոտության արդյունքները, թվարկում են եղած հաստատությունները:

Այնուհետև ուսուցիչը քննարկում է նրանց հետ այն հարցը, թե իրենց կարծիքով ի՞նչ հաստատություններ են անհրաժեշտ համայնքի, թաղամասի բնականոն կյանքի համար: Հնարավոր պատասխանները կարող են լինել.

- Դպրոց, մարզադպրոց, երաժշտական դպրոց, մանկապարտեզ
- Պոլիկլինիկա, հիվանդանոց, դեղատուն, զբոսայգի
- Խանութներ (մթերային տնտեսական, հագուստի, կոշիկի…)
- Հրշեջ կայան
- Ոստիկանական բաժանմունք և այլն:

Թվարկումից հետո քննարկում են այն հարցը, թե դրանցից որը չկա իրենց համայնքում: Այնուհետև երեխաները կատարում են առաջադրանքը. Յուրաքանչյուրն

ընտրում է անհրաժեշտ մի հաստատություն և դրա համար գրում փոքրիկ տեքստ մեկ նախադասությամբ և նկարեն ցուցանակ:

Տեքստի, խոսքի մեջ գլխավոր, հիմնական իմաստը գտնելը նույնիսկ փոքրիկ պարզ թվացող պատմություններում, այնքան էլ հեշտ չէ, ուստի երեխաներին պետք է քայլ առ քայլ սովորեցնել: Ունկնդրած տեքստում կարևորը, էականը գտնելու կարողությունը կարելի է զարգացնել բազմազան առաջադրանքներով:

Որպես սկիզբ՝ կարելի է ունկնդրման համար առաջարկել այսպիսի տեքստեր, որոնց գլխավոր ասելիքը, իմաստն արդեն իսկ պատրաստի ձևակերպված կա: Երեխաներին մնում է գտնել այդ նախադասությունը: Այս տեսանկյունից հրաշալի նյութ կարող են դառնալ բոլոր առարկաները, որոնց վերջում ձևակերպված է ասելիքը: Օրինակ՝ Այստեղ ի՞նչն է գլխավոր, ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր (<<Գայլն ու գառը>>):

Չաշխատեցիր ամառը, ասա՛, ի՞նչն է պատճառը (<<Ճպուռն ու մրջյունը>>):

- Որքան էլ որ լինես զգույշ, չարի համար թե վաղ, թե ուշ այդ է պահված, աղվե՛ս աղա (<<Չարի վերջը>>):

Կարելի է առաջարկել այնպիսի տեքստեր, որտեղ գլխավոր ասելիքն անհրաժեշտ է ձևակերպել: Այս պարագայում էլ կարող ենք օգնել երեխային ըմբռնել և ձևակերպել ունկնդրած տեքստի գլխավոր ասելիքը՝ առաջարկելով նրան պատասխանել (բանավոր կամ գրավոր) որոշակի հարցերի: Ընդ որում՝ հարցերը հարկավոր է կառուցել տրամաբանական այնպիսի շղթայով, որոնց պատասխանելով՝ երեխան հանգում է տեքստի գլխավոր իմաստին: Տեքստերի հետ աշխատանքը շատ կարևոր է հատկապես 3-4-րդ դասարաններում, քանի որ անհրաժեշտ է զարգացնել ուսումնական տարբեր նյութերի, տեքստերի հետ աշխատելու երեխաների հմտությունները՝ միջին դպրոցում սովորելու համար:

Ուշադիր լսելը շատ կարևոր կարողություն է: Պարզենք, թե կարողանո՞ւմ եք ուշադիր լսել:

Առաջադրանքը կատարելու համար ընկեր է պետք, թե ով է կարդալու 1-ին, իսկ ով՝ 2-րդ տեքստը:

Տեքստ 1. Փեթակում

Մեղուներն ապրում են փեթակում: Նրանք շատ աշխատասեր են: Փեթակում ամեն մեղու իր աշխատանքն ունի: Մի մասը կեր է բերում: Մյուսները դա լցնում են մեղրահացերի մեջ: Մի խումբ մեղուներ մաքրում են մեղրահացերը:

Մյուս խումբը թափահարում է թևիկները և օդափոխում փեթակը: Մեղուներն ունեն նաև պահակներ: Նրանք պահպանում են փեթակի մուտքը: Միայն մայր մեղուն չի աշխատում: Բոլորը խնամում են նրան: Փեթակում նա է ձվեր դնում: Հետո դրանցից մեղուներ են դուրս գալիս:

Պատասխաններ

Ո՞ւմ կամ ինչի՞ մասին է տեքստը:

Ի՞նչ նոր բան իմացար մեղուների մասին:

Ո՞րն է քո կարծիքով ամենակարևորը:

Տեքստ 2. Մրջնանոց

Պալատ ունեմ գետնի տակ,
Մեջը՝ հազար սյուն, սենյակ,
Հազար կամար, կամարակուռ,
Ամեն ինչ լավ ու մաքուր:
Այնտեղ՝ անթիվ մրջյուններ՝
Զարմանալի ջանասեր,
Աշխատանքի պիտանի,
Գիտեն՝ ով ինչ պիտի անի:
Մեկը պահեստն է մաքրում,
Մեկը հատիկ է կրում,
Մեկն էլ պահակն է բերքի,
Տունն է հսկում համայնքի:
Գիտեն պատժել և գողին,
Եվ բերքն իզուր ուտողին,
Գիտեն ամռանն աշխատել,
Իսկ ձմռանը՝ վայելել:

Պատասխանները՝

Ո՞ւմ կամ ինչի՞ մասին է տեքստը:

Ի՞նչ նոր բան իմացար մրջյունների մասին:

Ո՞րն է քո կարծիքով ամենակարևորը:

Հարցեր տալու կարողությունը շատ կարևոր է : Հաճախ ավելի դժվար է հարցեր տալը, քան դրանց պատասխանելը:

Տեքստը կարդալուց առաջ երեխաների հետ պետք է խոսել հարցեր տալու կարևորության մասին: Որպես օգնություն՝ կարելի է առաջարկել կոնկրետ ունկնդրած տեքստին, տեղեկատվությանն առնչվող հնարավոր հարցերի մի քանի կաղապար, որոնց օգնությամբ երեխաները կարող են առավել ճշգրիտ ձևակերպել իրենց հարցերը: Պետք է ուշադիր կարդալ տեքստը և մտածել, թե ինչ հարցեր կուզենար տալ:

Շատ կարևոր է տեքստի ընթերցման հնչերանգները, ընկերները պետք է կռահեն տրամադրությունը:

Հետազոտության արդիականացման գլխավոր փուլերից մեկը հենց դա է: Որպես առաջադրանքի զարգացում՝ ուսուցիչը կարող է նաև ինքն ընտրել այլ փոքրիկ տեքստեր, որոնք հնարավոր լինի կարդալ տարբեր հնչերանգներով:

Օրինակ՝ մի հատված Դ. Դեմիրճյանի <<Պույ-պույ մուկիկը>> հեքիաթից: Կարող են այն կարդալ տարբեր տրամադրություններով, այնպես որ մուկիկը լինի՝

- ուրախ
- տխուր
- զարմացած
- վախեցած և այլն:

Էս ի՞նչ էր, տո՛ ոնց եկավ,

Էս ծակից ո՞նց ներս մտավ,

Ո՞նց…ա՛յ, նայիր, էս ես մուկը

Էն կոկոսը, էն միջուկը:

Կարդա տեքստը տարբեր ձևերով, թող ընկերներդ կռահեն, թե ինչ տրամադրությամբ են կարդում:

Դու էլ լսիր ընկերներիդ և կռահիր նրանց տրամադրությունը:

Իսկ դուք կարողանո՞ւմ եք գնահատել քո և քեզ շրջապատող մարդկանց տրամադրությունը, նկատել փոփոխությունները, արձագանքել դրանց:

Ինչպե՞ս ես արտահայտում տրամադրությունդ, երբ ուրախ ես, տխուր ես, վախեցած ես, զարմացած ես:

Օրինակ՝ երբ ուրախ եմ, ժպտում եմ, ծիծաղում եմ, ուրախ ձայն եմ տալիս, երգում եմ, թռչկոտում եմ, գրկում եմ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ կարող ենք արձանագրել, որ Մայրենիի ուսուցման ընթացքում մենք հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ ի դեմս, պատմությունների, առակների, հեքիաթների և այլ գրական-գեղարվեստական նյութերի: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուտի շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցական կարողությունների, բազմաբնույթ մտածողության զարգացմանը:

Տեքստի հետ աշխատելիս պետք է ուշադիր լինել, որ երեխաները առաջադրանքը կատարելուց հետո նոր միայն կարդան ամբողջական տեքստը:

Տեքստի ունկնդրումը ենթադրում է բազմաբնույթ մտածողության մի շարք կարողություններ.

- Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը,
- Դուրս բերել իրեն անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվություն,
- Հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները,
- Սովորեցնել հասկանալ ունկնդրած տեքստը,
- Որոշել տեքստի թեման,
- Որոշել տեքստի հիմնական գաղափարը,
- Ո՞րն է ամենակարևորը և ինչո՞ւ ընտրեցի այս թեման:

Տեքստերի հետ աշխատանքը շատ կարևոր է հատկապես 3-4-րդ դասարաններում, քանի որ անհրաժեշտ է զարգացնել ուսումնական տարբեր նյութերի, տեքստերի հետ աշխատելու երեխաների հմտությունները՝ միջին դպրոցում սովորելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թերզյան Գ. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., <<Խոսք և հաղորդակցություն>> 1: Մեթոդական ձեռնարկ տարրական դասարանների ուսուցիչների համար: Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013թ.:
2. Թերզյան Գ., Խաչատրյան Հ.: Մեթոդական ձեռնարկ տարրական դասարանների ուսուցիչների համար: Երևան, Զանգակ հրատարակչություն 2017թ.
3. Հովարդ Գարդներ, <<Գիտակցության կառուցվածքը>>, Երևան, 1983թ.:
4. Վարդումյան Ս. Տ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ: Ձեռնարկ մանկավարժների եւ ուսանողների համար, Նոյյան տապան, 2005: